

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 20-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի չորս շրջանավարտների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը (ատենավար), Մայրավանքիս միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Շրջանավարտների ավարտաճառերի պաշտպանության քննիչ հանձնաժողովի կազմում էին՝ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Անանիա եպս. Արսեբաջյանը (հանձնաժողովի նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ Պարգև Շահբազյանը և Երվանդ Մելքոնյանը:

Նախ ընթերցվեց ներկայացված յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը, որից հետո յուրաքանչյուր շրջանավարտ հանդես եկավ իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ և պատասխանեց տրված հարցերին:

Իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ հանդես եկան.

1. **Տ. Մկրտիչ քհն. Երանյան.**

Ավարտաճառի թեման էր՝ «Պետրոս Բերդումյան, հոգևորականը, գործիչը, «Յիսուս Փեսայ» և «Ողբ» պոեմները»:

Աշխատանքը բաղկացած էր 135 մեքենագիր էջերից և ընդգրկում էր Պետրոս Բերդումյանի գրական ժառանգությունը, «Յիսուս Փեսայ» և «Ողբ» պոեմների համեմատական բնագիրը և զուգահեռները՝ Աստվածաշնչական սկզբնաղբյուրների հետ:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց «գերազանց»:

2. **Ալվարդ սրկ. Զարգարյան.**

Ավարտաճառի թեման էր՝ «Պետրոս Բերդումյանի տաղերը»:

Աշխատանքը բաղկացած էր 260 մեքենագիր էջից (ուսումնասիրություն՝ 50 էջ, և բնագիր՝ 210 էջ), որտեղ հեղինակը ներկայացրել էր Բերդումյան բանաստեղծին՝ վեր հանելով նրա ավելի քան հարյուր տաղերի գրական-գեղարվեստական արժեքը:

Ներկայացված ուսումնասիրությունը արժանացավ «գերազանց» գնահատականի:

3. **Էդվարդ սրկ. Միրզախանյան.**

Ավարտաճառի թեման էր «Գրիգոր վարդապետ Սկևռացու կյանքը և մատենագրական ժառանգությունը»:

Ուսումնասիրությունը բաղկացած էր 70 մեքենագիր էջերից և ներկայացնում էր ԺԳ դարի նշանավոր վարդապետ Գրիգոր Սկևռացու մատենագրական ժառանգության միայն հինգ միավորները և դրանց գրական-գեղարվեստական արժեքն ու վերլուծությունը:

Ներկայացված աշխատանքը արժանացավ «գերազանց» գնահատանքի:

4. **Հովհաննես սրկ. Անտոնյան.**

Ավարտաճառի թեման էր «Ավետիք Եվդոկիացու կյանքը և մատենագրական ժառանգությունը»:

Ավարտաճառը բաղկացած էր 65 մեքենագիր էջերից և իր մեջ բովանդակում էր Հայ Եկեղեցու այդ աննկուն երախտավորի բարդ ու դժվարին կյանքը, եկեղեցանվեր գործունեությունը և գրական ստեղծագործությունների արժևորումը:

Ներկայացված ուսումնասիրությունը գնահատվեց «գերազանց»:

Ավարտաճառերի պաշտպանությունից և հոգևոր ճեմարանի դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունից հետո, շրջանավարտներին ուղղված շնորհավորանքի ու բարեմաղթության խոսք ասաց ատենավար գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հաջորդ օրը շրջանավարտներին ընդունեց Վեհափառ Հայրապետը և իր օրհնությունը բաշխեց բոլորին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է շրջանավարտներին՝ մաղթելով, որ ապագայում նրանք դառնան անխոնջ մշակները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: